



Համարը
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2020.03.18/22(1577) Հոդ.266
Ընդունող մարմինը Վճռաբեկ դատարան
Ստորագրող մարմինը Նախագահող
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 11.04.2019

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 11.04.2019
Ստորագրման ամսաթիվը 11.04.2019
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ԹԻՎ ԵԿԴ/0229/01/16 ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԿԴ/0229/01/16

ԵԿԴ/0229/01/16

Նախագահող դատավոր՝ **Մ. Պետրոսյան**

Դատավորներ՝

Ռ. Մխիթարյան

Ս. Համբարձումյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝

Լ. Թադևոսյանի

մասնակցությամբ դատավորներ՝

Հ. Ասատրյանի

Ս. Ավետիսյանի

Ե. Դանիելյանի

Ա. Պողոսյանի

Ս. Օհանյանի

քարտուղարությամբ՝

Մ. Ավագյանի

մասնակցությամբ տուժողի իրավահաջորդ՝

Ա. Աբրահամյանի

2019 թվականի ապրիլի 11-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Սարգսյանի պաշտպաններ Վ.Էլբակյանի և Կ.Հովհաննիսյանի վճարել բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի ապրիլի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 13139216 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2016 թվականի ապրիլի 9-ին Գոռ Սարգսյանը ձերբակալվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Գ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Գ.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի սեպտեմբերի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճռով Գ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով:

3. Տուժողի իրավահաջորդ Ա.Աբրահամյանի և Գ.Սարգսյանի պաշտպաններ Վ.Էլբակյանի ու Կ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ պաշտպանների բողոքը մերժել է, տուժողի իրավահաջորդի բողոքը՝ բավարարել, և Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճիռը պատժի մասով բեկանել է՝ Գ.Սարգսյանին դատապարտելով ազատազրկման՝ 11 (տասնմեկ) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ Վ.Էլբակյանը և Կ.Հովհաննիսյանը բերել են վճարել բողոք, որը Վճարել դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարել բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարել բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

5. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի կողմից ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 8-ի թիվ 30/5736 գրության համաձայն՝ «(...) [Թ/իվ 13139216 քրեական գործով անցկացված (...) օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ (...) հանցագործությունը կատարել է Գ.Սարգսյանը (...)]»¹:

5.1 ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 9-ի զեկուցագրի համաձայն՝ «(...) [Մ]ոյն թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 6:50-ի սահմաններում տարված՝ բացատրական աշխատանքների արդյունքում, [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի] ինքնակամ ներկայացել է Գ.Սարգսյանը (...) և հայտնել, որ սույն թվականի ապրիլի 8-ին՝ [Երևանի պետական համալսարանի] հարող տարածքում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Ա.Աբրահամյանին պատճառված մարմնական վնասվածքը հասցրել է ինքը (...)»²:

5.2 Ինքնակամ ներկայանալու մասին 2016 թվականի ապրիլի 9-ի արձանագրության համաձայն՝ «(...) [2016 թվականի ապրիլի 9-ին՝] ժամը 6:50-ի սահմաններում՝ [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի] ինքնակամ ներկայացվել է Գ.Սարգսյանը, (...) և հայտարարել, որ [2016 թվականի ապրիլի 8-ին՝] ժամը 13:30-ի սահմաններում՝ Երևան քաղաքի Չարենցի փողոցում դանակով հարվածել է [Ա.Աբրահամյանին] (...)»³:

6. «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշումը գաղտնագերծելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 17-ի որոշման համաձայն՝ «(...) 2016 թվականի ապրիլի 9-ին [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության

Կենտրոնականի բաժնի պետ՝ Գ. Ղուկասյանը միջնորդություն է ներկայացրել «ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ [ին] (...)՝ դիմելու Երևանի Կենտրոն և Նորք-Մարտշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան՝ [Գ. Սարգսյանի] (...) նկատմամբ [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի] պետի օպերատիվ գծով տեղակալի թիվ 402 աշխատասենյակում «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու համար (...)»⁴:

6.1 2017 թվականի հունիսի 2-ի թիվ ԳՂ-17 Ե-28690 գրության համաձայն՝ «(...) Գոր Սարգսյանի նկատմամբ «Ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն ստանալու մասին (...) միջնորդությունը դատարան է ներկայացվել 09.04.2016թ. ժամը 06:30-ի սահմաններում, նշված միջնորդության քննության կապակցությամբ նշանակված դատական նիստը (...) սկսվել է 09.04.2016թ. ժամը 07:00-ին և ավարտվել է 07:10-ին: (...)»⁵:

6.2 Քրեական գործում առկա՝ «Հետաքննության մարմնին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» հանձնարարությունը թվագրված չէ: Նշված փաստաթղթում առկա են տեղեկություններ այն մասին, որ. «(...) 09.04.2016թ.-ին՝ ժամը 08:43-ին, Գ. Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի կասկածանքով ձերբակալվել և տեղափոխվել է ՀՀ ոստիկանության ԵԲՎ-ի ՁՂՎ: (...)»⁶:

7. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում 2016 թվականի ապրիլի 9-ին անցկացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներն ամփոփող լազերային սկավառակի գնմության մասին արձանագրության համաձայն՝ «(...) Տեսագրության սկզբում տեսախցիկի հանդիպակաց կողմում գտնվող դռնից սենյակ է մտնում (...) [Գ. Սարգսյանը]: Չրոյցը վարող տղամարդու և աշխատասենյակի [դիմացի] ձախ կողմում նստած տղամարդու հարցերին ի պատասխան՝ Գ. Սարգսյանը հայտնում է [տեղեկություններ՝ քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ իր մեղափորության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ փաստական հանգամանքների վերաբերյալ] (...)»⁷:

8. Առաջին ստյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) [Առաջին ստյանի դատարանը], անդրադառնալով [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում] 2016 թվականի ապրիլի 9-ին իրականացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ամփոփ տեսաձայնագրությունն անթույլատրելի սպառնույթ ճանաչելու մասին պաշտպանի եզրահանգմանն ու դրա պատճառաբանություններին, գտնում է, որ դրանք անհիմն են, նշված միջոցառումն անցկացվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի և քրեատարախուզական օրենսդրության պահանջներին համապատասխան»⁸:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Անդրադառնալով (...) վերաքննիչ բողոքի փաստաթղթերին, որով [բողոքաբերները] խնդրել են անջուրստրելի սպառնույթ ճանաչել ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում՝ 2016 թվականի ապրիլի 9-ին իրականացված «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառման տեսաձայնագրությունը (...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բերված փաստաթղթեր անհիմն է, նշված սպառնույթը ձեռք է բերվել քրեատարախուզական օրենքի նորմերի պահպանմամբ, այն անջուրստրելի ճանաչելու հարցին արդեն իսկ անդրադարձել է [Առաջին ստյանի դատարանն] իր դատավճռով՝ հանգեցրելով ճիշտ հետևության (...)»⁹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակների կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Բողոքաբերները վկայակոչել են օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող իրավական նորմերը և փաստել, որ անհիմն են «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները՝ որպես թույլատրելի սպառնույթ ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները: Բողոքաբերների պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է հիշյալ միջոցառման իրականացման ընթացակարգին և արդյունքների օգտագործմանը ներկայացվող պահանջների խախտումը հիմնավորող փաստական տվյալները:

11. Բողոք բերած անձինք նշել են նաև, որ Գ. Սարգսյանի արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական: Մասնավորապես, բողոքի հեղինակները գտել են, որ սույն գործով Գ. Սարգսյանի վարքագծի հետաֆեկտային փուլին լիարժեք գնահատական չի տրվել և նրա արարքը ենթակա էր որակման ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով:

12. Անդրադառնալով նշանակված պատժի համաչափությանը՝ բողոք բերած անձինք գտել են, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել ամբաստանյալի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները՝ անտեսելով Վճռաբեկ դատարանի՝ Պարույր Բայրախյանի գործով 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 և Ալեքսան Սարգսյանի գործով 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԶԸԴՅ/0109/01/08 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները:

13. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպաններ Վ. Էլբակյանը և Կ. Հովհաննիսյանը խնդրել են բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և ամբաստանյալ Գ. Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանն առնչվող օրենսդրական նորմերի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն

ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Գ.Սարգսյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է և դրա արդյունքները որպես ապացույց օգտագործվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է»:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն են՝

- 1) հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը.
- 2) հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը. (...)»:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ստիպարումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց»:

2. Սույն օրենքում բնակարանի հսկայությունը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով»:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «[Ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործառնքների գաղտնի վերահսկում] օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»:

17. Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ է, որը նպատակ է հետապնդում բացահայտել, կանխել և խափանել հանցագործությունները, ինչպես նաև հայտնաբերել հանցագործությունը նախապատրաստող, կատարող և կատարած անձանց: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության շրջանակներում ձեռնարկվող միջոցառումներն ընդհանուր առմամբ հետապնդելով հանցագործությունների բացահայտման նպատակ, օժանդակում են քրեական դատավարություն իրականացնող մարմինների առջև դրված խնդիրների լուծմանը և բարձրացնում են քրեական հետապնդման արդյունավետությունը:

17.1 Միևնույն ժամանակ, օպերատիվ-հետախուզական գործունեությունն առանձնանում է իր հետախուզական-որոնողական բնույթով: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական միջոցառումների ձեռնարկումը նպատակաուղղված է ենթադրյալ հանցանքների, դրանք ենթադրաբար նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերմանն ու պարզմանը, այդ կապակցությամբ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրմանը: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրենց հետախուզական-որոնողական բնույթով միտված են նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության դեպքերի և դրանք կատարող անձանց հնարավորինս արագ բացահայտմանը, որին անմիջապես հաջորդում է ստացված տվյալների ամրագրումը քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված գործողությունների կատարմամբ: Այսպես, հետաքննության փուլում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմամբ ապահովվում է «սուրբ հետքերով» հանցագործության քննությունը, իսկ նախաքննության ընթացքում այն նաև օժանդակում է քննիչի դատավարական գործունեությանը, երբ քրեադատավարական գործիքակազմը բավարար չէ քրեական հետապնդման խնդիրների արդյունավետ իրացման համար, և հանցավորության դեմ պայքարի հանրային շահը պահանջում է նաև գործի համար նշանակություն ունեցող առանձին հանգամանքների բացահայտման համար օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների և միջոցների կիրառում:

17.2 Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքում միջամտություն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին: Այդ պարագայում, իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում հարկավոր է հաշվի առնել նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ պետության կողմից ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական

կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները՝ մշտապես պահպանելով հանրային շահի և անհատի շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռությունը: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթից ելնելով՝ իրավասու մարմիններն առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, համապատասխան միջոցառման տեսակն ընտրելիս և այն իրականացնելիս, անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության դեպքում՝ համաչափության սկզբունքին համահունչ պետք է ապահովեն նաև արդար դատաբնության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների համարժեք պաշտպանությունը:

Այդ համատեքստում, հարկ է վկայակոչել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումներն այն մասին, որ «երբ (...) հավասարակշռության էր բերվում մի կողմից՝ գաղտնի հսկողության միջոցների օգնությամբ անխտանգությունը պաշտպանելու պատասխանող պետության շահը, իսկ մյուս կողմից՝ դիմումատուի անձնական կյանքը հարգելու իրավունքի իրացման նկատմամբ միջամտության լրջությունը, իրավասու ազգային մարմիններն ունեն սեփական հայեցողության որոշակի լուսանցք պատշաճ այն միջոցների ընտրության հարցում, որոնք կօգտագործվեն ազգային անխտանգության պաշտպանության օրինական նպատակին հասնելու համար: Այդուհանդերձ, [ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի] պետք է գոյություն ունենան չարաշահումներից զերծ պահող բավարար և արդյունավետ երաշխիքներ: Այսպիսով, դատարանը հաշվի է առնում գործի բոլոր հանգամանքները, օրինակ՝ հնարավոր միջոցառումների բնույթը, տարածման տիրույթը և տևողությունը, դրանց կարգադրման համար պահանջվող պատճառները, դրանց թույլատրելու, կատարելու և հսկելու իրավասություն ունեցող մարմինները, ինչպես նաև՝ ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի տեսակը»¹⁰:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ հետապնդվող նպատակների կատարմանն ուղղված միջոցների ընտրությունը սկզբունքորեն ընկնելով պետության սեփական հայեցողության լուսանցքի շրջանակներում՝ ունենում է լայն կամ նեղ դրսևորում՝ ելնելով պաշտպանության ենթակա իրավունքի բնույթից: Օրինակ՝ «հաշվի առնելով անձի ինքնության ինքնորոշման և ֆիզիկական ու բարոյական անձեռնմխելիության համար [Եվրոպական կոնվենցիայի] 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների առանցքային կարևորությունը, պետություններին վերապահված սեփական հայեցողության լուսանցքը բնակարանի հարցերում ավելի նեղ է, եթե խոսքը գնում է միայն [Եվրոպական կոնվենցիայի] թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքների մասին»¹¹:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների կոնկրետ տեսակն ընտրելիս, ելնելով անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության բնույթից, պետությանը վերապահված սեփական հայեցողության լուսանցքի տիրույթի տարբերակման գաղափարն արտացոլված է նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում: Մասնավորապես, օրենսդիրը որոշ խումբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար նախատեսելով լրացուցիչ չափանիշներ՝ սահմանափակել է դրանք ընտրելու իրավակիրառողի հայեցողության լուսանցքը: Այդպիսի միջոցառումների շարքին է դասվում «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի նպատակն անձին (անձանց) բնակարանում հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների օբյեկտիվ ընթացքը վերահսկելն է, դրա արդյունքներն ամրագրելը՝ առանց այդ դեպքերի և իրադարձությունների ընթացքն ուղղորդելու կամ դրանք նախապես ծրագրելու: Հաշվի առնելով, որ այդ գործողության իրականացմամբ լուրջ միջամտություն է տեղի ունենում անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքին՝ օրենսդիրն ամրագրել է, որ այն կարող է իրականացվել բացառապես երբ՝

ա) անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և

բ) եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Հարկ է ընդգծել, որ վերջին չափանիշի ամրագրմամբ օրենսդիրն *inter alia* սահմանել է, որ նշված միջոցառումը կարող է իրականացվել միայն որպես ծայրահեղ (վերջին) միջոց (*last resort*), երբ այլընտրանքային եղանակով անհնարին է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը: Այսինքն՝ նշված միջոցառումը ոչ միայն պետք է իրականացվի դրա բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան, այլ նաև այն դեպքում, երբ բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, այդ թվում՝ քրեական գործով վարույթի շրջանակում քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետ տեղեկությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը լինելով իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ՝ ենթակա է իրականացման այդ գործունեության բնույթին, նպատակային նշանակությանը և օրենսդրությամբ առաջադրվող համաչափության պայմաններին համապատասխան՝ մշտապես երաշխավորելով հանրային շահի և անհատի իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2016 թվականի ապրիլի 8-ին **նախաքննության մարմնի** կողմից հարուցվել է թիվ 13139216 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով¹²,

- նույն օրվա թիվ 30/5736 գրության համաձայն՝ անցկացված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով

պարզվել է, որ հանցագործությունը կատարել է Գ.Սարգսյանը¹³,

- ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 9-ի զեկուցագրի համաձայն՝ ապրիլի 9-ին, **ժամը 6:50-ի** սահմաններում տարված բացատրական աշխատանքների արդյունքում, ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի, **նույն ժամին**, ինքնակամ ներկայացել է Գ.Սարգսյանը և հայտնել, որ ապրիլի 8-ին՝ Երևանի պետական համալսարանին հարող տարածքում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Ա.Աբրահամյանին մարմնական վնասվածքը պատճառել է ինքը¹⁴,

- 2016 թվականի ապրիլի 9-ին, **ժամը 06:30-ի սահմաններում հետաքննության մարմինը**՝ ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետը, միջնորդություն է ներկայացրել ՀՀ ռստիկանության պետի առաջին տեղակալին՝ դիմելու Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ Գ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի **թիվ 402 աշխատասենյակում** «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու համար: Նշված միջնորդության քննության կապակցությամբ՝ նշանակված դատական նիստը սկսվել է նույն օրը **ժամը 07:00-ին** և ավարտվել **ժամը 07:10-ին**¹⁵,

- քրեական գործում առկա՝ «Հետաքննության մարմնին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» հանձնարարությունը թվագրված չէ: Նշված փաստաթղթում առկա են տեղեկություններ այն մասին, որ 2016 թվականի ապրիլի 9-ին **ժամը, 08:43-ին** Գ.Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի կասկածանքով ձերբակալվել և տեղափոխվել ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության ԶՊՎ¹⁶,

- ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում 2016 թվականի ապրիլի 9-ին անցկացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներն ամփոփող լագերային սկավառակի գնության արձանագրության համաձայն՝ «(...) Տեսագրության սկզբում տեսախցիկի հանդիպակաց կողմում գտնվող դռնից սենյակ է մտնում (...) [Գ.Սարգսյանը]: Չրոյցը վարող տղամարդու և աշխատասենյակի [դիմացի] ձախ կողմում նստած տղամարդու հարցերին ի պատասխան՝ Գ.Սարգսյանը հայտնում է [տեղեկություններ՝ քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ իր մեղավորության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ փաստական հանգամանքների վերաբերյալ] (...)»¹⁷,

- Առաջին աստիճանի դատարանը Գ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել մեղսագրված արարքում, և մեղադրական դատավճռի հիմքում, ի թիվս այլ ապացույցների, դրել է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները՝ գտնելով, որ նշված միջոցառումն իրականացվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի և քրեադատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան¹⁸,

- Վերաքննիչ դատարանն ամփոփոխ է թողել Առաջին աստիճանի դատարանի դատավճռը՝ միաժամանակ փաստելով, որ «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառման տեսաձայնագրությունը ձեռք է բերվել օրենսդրական նորմերի պահպանմամբ¹⁹:

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով, սույն որոշման 16-17.2-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսաձայնագրությունը Գ.Սարգսյանի վերաբերյալ մեղադրական դատավճռի հիմքում դնելիս այն պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

- «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է ոչ թե օրենքով սահմանված որոնողական-հետախուզական բնույթին համապատասխան երևույթների և դեպքերի օբյեկտիվ ընթացքը վերահսկելու, այլ, ըստ էության, հարցաքննության եղանակով Գ.Սարգսյանից գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունների ստացման գործընթացը գաղտնի տեսաձայնագրելու նպատակով: Այսինքն՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակում փաստացի իրականացվել է քողարկված հարցաքննություն՝ արժանահավատության բարձր աստիճան ունեցող ապացույց ձեռքբերելու նպատակով²⁰՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ հարցաքննության դատավարական կարգի այնպիսի առանցքային պահանջներ, ինչպիսիք են՝ հարցաքննվող անձին իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ լռելու, իրավաբանական օգնություն ստանալու հիմնարար իրավունքները պարզաբանելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների կիրառման մասին տեղեկացնելը՝ անձին իրավունք վերապահելով այդ առնչությամբ ներկայացնելու իր դիտողություններն ու հայտարարությունները,

- քննարկվող միջոցառումն իրականացվել է ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում, որպիսի պայմաններում Գ.Սարգսյանի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտություն տեղի չի ունեցել, ինչը բնորոշ է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Այսպես, Գ.Սարգսյանը գտնվելով ռստիկանության պաշտոնատար անձի աշխատասենյակում՝ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ որչափս ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Նման պայմաններում, նրա նկատմամբ չէր կարող իրականացվել մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը սահմանափակող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը,

- «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակի՝ նույն տեղեկությունների ձեռքբերման դատավարական միջոցի ակնհայտ առկայության պարագայում: Մասնավորապես, եթե ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 9-ի զեկուցագրի համաձայն՝ նույն օրը ժամը

6:50-ի սահմաններում տարված բացատրական աշխատանքների արդյունքում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին ինքնակամ ներկայացել էր Գ.Սարգսյանը և հայտնել, որ ինքն է Ա.Աբրահամյանին պատճառել մարմնական վնասվածքը²¹, ապա գործի համար կարևորություն ներկայացնող տեղեկությունները

Գ.Սարգսյանից կարող էին ձեռքբերվել ոչ թե հաջորդիվ նրա նկատմամբ գաղտնիության ռեժիմով «ներքին դիտում»

օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելով, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգով՝ նրան որպես կասկածյալ հարցաքննելով: Այսինքն՝ տվյալ պարագայում չի պահպանվել նաև համաչափության սկզբունքը,

- նախաքննության փուլում գտնվող քրեական գործով հետաքննության մարմնի կողմից իրականացվել է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, այնինչ քրեական գործի նյութերում բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ դատախազի ցուցումը կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ մասի 4-րդ մասի 7-րդ կետով նախատեսված՝ քննիչի հանձնարարությունը՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է քրեական գործում առկա՝ «Հետաքննության մարմնին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» վերտառությամբ հանձնարարությանը, ապա այն թվագրված չէ²²: Բացի այդ, այն տեղեկություններ է պարունակում Գ.Սարգսյանին 2016 թվականի ապրիլի 9-ին, ժամը 8:43-ին ձերբակալելու մասին, մինչդեռ 2017 թվականի հունիսի 2-ի՝ թիվ ԴԴ17 Ե-28690 գրության համաձայն՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2016 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 6:30-ի սահմաններում, միջնորդության քննության կապակցությամբ նշանակված դատական նիստը սկսվել է ժամը 07:00-ին և ավարտվել 07:10-ին²³: Ակնհայտ է, որ 2016 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 6:30-ի սահմաններում՝ դատարան ներկայացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդության հիմքում դրված հանձնարարությունն օբյեկտիվորեն չէր կարող տեղեկություն պարունակել նույն օրը, ժամը 8:43-ին Գ.Սարգսյանին ձերբակալելու մասին, ինչից հետևում է, որ նշված հանձնարարությունը ժամանակագրական առումով ոչ թե նախորդել, այլ հաջորդել է քննարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացմանը:

20. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ փաստական հանգամանքները պատշաճ ուշադրության չարժանացնելը և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում 2016 թվականի ապրիլի 9-ին իրականացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները Գ.Սարգսյանի մեղադրանքի հիմքում դնելը հանգեցրել են վարույթի արդարացիության և ըստ այդմ՝ Գ.Սարգսյանի արդար դատաքննության իրավունքի խախտման: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված սպառնալից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով անթույլատրելի է և չէր կարող դրվել մեղադրվող արարքում Գ.Սարգսյանի մեղավորությունը հիմնավորող սպառնալիցների գանգվածում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Գ.Սարգսյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է և դրա արդյունքները որպես սպառնալից օգտագործվել են օրենսդրության պահանջներին համապատասխան, հիմնավոր չէ:

21. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 105-րդ և 106-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է գնահատի քրեական գործում առկա այլ սպառնալիցները և հանգի համապատասխան հետևության՝ անդրադառնալով նաև բողոքարկի կողմից սույն որոշման 11-12-րդ կետերում բարձրացված՝ Գ.Սարգսյանի արարքին տրված քրեաիրավական գնահատականի և վերջինիս նկատմամբ նշանակված պատժի համաչափության վերաբերյալ փաստարկներին:

22. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Գոռ Սարգսյանին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշումը

քեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գոռ Իշխանի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 67:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 71:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 73:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 165:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 4:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 97-99:

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 167:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 52-60:

⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 71-106:

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Roman Zakharov v. Russia* գործով 2015 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 47143/06, կետ 232, *Irfan Guzel v. Turkey* գործով 2017 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 35285/08, կետ 85:

¹¹ Տե՛ս *Gladysheva v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7097/10, կետ 93:

¹² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

¹³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 5.1-5.2-րդ կետերը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 6-6.1-րդ կետերը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

²⁰ Տե՛ս *mutatis mutandis Upramajhu Zaskorjani* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 16-րդ կետը:

²¹ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

²² Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

²³ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

**Նախագահող՝
Դատավորներ՝**

**Լ. Թադևոսյան
Հ. Ասատրյան
Մ. Ավետիսյան
Ե. Դանիելյան
Ա. Պողոսյան
Ս. Օհանյան**